որ անցաւ Կուր գետը։ Այս գետը Բաղդադի Սարայ գետին հաւասարմեծ է եւ անցնում է քաղաքի միջից, այնպէս որ Տիգրիս նորա արեւմտեան, իսկ Սուղդաբիլ՝ նորա արեւելեան կողմն է մնում։ Բուղայ բանակեցաւ արեւելեան ափում. Զիրակ՝ անցնելով Կուրը՝ մտաւ Տիգրիսի մայրանը։[1] Քաղաքը ունի հինգ դուռ, որոնք են՝ Մայդանի դուռ, Հին դուռ։ Փոքր դուռ, Միջին դուռ եւ Սուղդաբիլի դուռ. Բուղան ապա ուղարկեց քրիստոնեայ Աբու Աբբաս Վասղիին[2] հայ բնակիչների մէջ ապրող արաբների եւ պարսիկների մօտ. երբ Զիրակ հասաւ Մայդանի մօտ, իսկ Աբու Աբբաս՝ Միջին դուռը, Իսահակ ի. Իսմայէլ եկաւ Զիրակին ընդդէմ եւ կռւի հրաւիրեց նորան. Բուղան բարձրացաւ մի բլուրի վերայ, որ քաղաքի հանդէպ Սուղդաբիլի մօտ կը գտանուէր, տեսնելու համար, թէ ինչ են անելու Զիրակ եւ Աբու Աբբաս. ապա նա ուղարկեց նաֆթակիրներ, որոնք՝ վառելով կուպրը՝ նետեցին քաղաքի մէջ. կուպրից քամին սաստկացաւ։ Իսահակ ի. Իսմայէլ վերադարձաւ քաղաք տեսնելու հրդեհը, որ պատել էր նորա պալատը եւ շրջակայ շինութիւնները. այն ժամանակ նորա վերայ յարձակեցան թուրքերը եւ Մուղարիբացիք (Ափրիկեցիք), գերեցին նորան իւր որդի Օմարի հետ եւ բերեցին Բուղայի մօտ, որ հրամայեց տանել նորան եւ կապանքների մէջ գլխատել Հասակ դռան հանդէպ.[3] նորա գլուխը

---

1 Նոյն Մայդանը՝ Կուր գետին կից՝ բաժանում է ներկայումս հայ եւ թուրք թաղերը քաղաքի հարաւարեւելեան մասում։

2 Ա.յլ օրինակներ ունին՝ Վարազի կամ Վարժի, Վարատի, Քարազի (الوارثى, الوارتى, القارثى)։ Ըստ մեր պատմագրի՝ Աբու Աբբաս նոյն անձնաւորութիւնն է, որ հաւաձիս վերջում յիշում է Սմբատ ի. Աշոտ անւամբ։

3 Ըստ Թովմայ Արծրունեաց՝ Սահակ որդի Իսմայելի ինքն իւր կամքը գնաց Բուղայի մօտ Ձիրաքի առաջնորդու թեամբ։